

ՀԱՅՈՑ ԼԵՋՎԻ ՀՈՄԱՆԻՇՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆՆԵՐ՝

Հայ ընթերցողը մեծ անհամբերությամբ և բավական երկար սպասեց հայոց լեզվի հոմանիշների բառարանի լույս ընծայմանը։ Եվ ահա, հրապարակի վրա է այդ արժեքավոր աշխատությունը։ Հինելով հեղինակի երկար տարիների համառ և տքնաչափ աշխատանքի արգասիք, բառարանը իր ծավալով, բառերի և դարձվածների ընդգրկման չափերով համարյա սպառում է հայերենի հոմանիշները։ Ա. Սուքիասյանը դիտական համակարգի տակ է դրել ոչ միայն հայերեն բառարաններում սրձանագրված հոմանիշները, այլև դրականությունից, պարբերական մամուլից, ինչպես նաև բանավոր խոսքից իր հավաքած հարուստ նյութով հարստացրել է բառարանը՝ առատիվ հեղինակի նշենք նաև, որ բառացանկը ծանրաբեռնված չէ անհարկի փոխառություններով։ Կարծես հանդիպում են այլ բառարաններում։ Հեղինակի խստությունը հասնում է այն աստիճանի, որ նույնիսկ արդեն խոսակցական դարձած բոյ, յայլա, յայլավոր, սաւվոր և այլ այլաբարդի բառեր չի բերում որպես զխաբառ։

Ա. Սուքիասյանի՝ հայերենի հոմանիշների բառարանն ընդգրկում է հայոց լեզվի բառապարի բոլոր շերտերը՝ այդ թվում զուտ գրաբարյան, բարբառային, միջին հայերեն բառեր, և նայաժ գրան, այն էսիստ արդիական է, ժամանակակից հայերենի մի բառարան, որի հիմքում ընկած են արդի հայերենի բառազորածական, քերականական և ոճագիտական նորմաները։ Բառարանի դիտական և, մանավանդ, գործնական նշանակությունը ավելի քան ընդգծվում է ոճական և այլ կարգը բազմաթիվ նշումների շնորհիվ։ Հավաքած հսկայական նյութը հեղինակը դասողասել է ըստ իմաստների, հոմանիշները խմբավորել է ըստ կիրառության ոլորտների։ Բառարանը ընթերցողին օգնում և կողմնորոշում է նաև մի շարք այլ օժանդակ նշումներով։

Բացատրական, երկլեզվյան, տերմինաբանական և այլ բնույթի բառարաններով այնքան հարուստ հայ բառարանագրության մեջ համեմատաբար սահմանափակ է հոմանիշների բառարանների թիվը։

Հայ բառարանագրությունը, իրավամբ, կարող է պարծենալ գրաբարի բացատրական (Հայկազյան), և. Բյուզանդացու, Մ. Ջախջախյանի երկլեզվյան-թարգմանական, Հ. Աճառյանի արմատական, Ս. Ամատունու գավառական և այլ բառարաններով, սակայն հիշվածների արժեքի, սամ խեղուզ, նրանց բարձրությանը մոտեցող հոմանիշների բառարան չենք ունեցել։

Հայտնի է, որ հայ իրականության մեջ հոմանիշների բառարան կազմելու փորձեր արվել են տակավին 13—14-րդ դարերում, իսկ տպագիր առաջին բառարանը լույս է տեսել 1769 թ. (Մխիթար Սեբաստացու Հայկազյան բառարանի երկրորդ հատորում)։ Այն ընդգրկում է շուրջ 35 հազար բառ։ Բնույթով բառարանագրության մեջ հոմանիշների բառարանի առաջին փորձը կապվում է Բրդ Ֆոնվիդիի անվան հետ (լույս է տեսել 1783 թ. և պարունակում է հոմանիշների 77 խումբ)։

Ժամանակին, ըստ էության, հոմանիշների բառարանի դեր են կատարել գրաբարից աշխարհաբար և աշխարհաբարից գրաբար բառարանները (Արցախեցի, Հյուրմուզյան և այլն)։ Եվ, այնուամենայնիվ, գիտական սկզբունքներով կազմված հայերեն հոմանիշների բառարան ստեղծվում է միայն քսաներորդ դարում։ 1938 թ. Կահիրեում լույս է տեսնում Հ. Գալայանի «Բառարան-դասնարան հայ լեզվի հոմանիշներում» աշխատությունը, որը պարունակում է 15 հազար բառ-հոդված։

Հոմանիշների բառարանի պակասությունը ինչպես հայ, այնպես էլ ռուսական իրականության մեջ բացատրվում է գլխավորապես նրանով, որ մինչև հիմա լեզվաբանական գիտության մեջ բավարար չափով մշակված ու ճշտված չեն հոմանիշների սահմանները, որոշված չեն նրանց առանձնացման չափանիշները և դասակարգման սկզբունքները։ Գոյություն ունեն իրարամերժ,

Ա. Մ. Սուքիասյան, Հայոց լեզվի հոմանիշների բառարան (պարունակում է 83.000) բառ և դարձվածաբանական միավոր), ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1967, 683 եռա-յուն էջ։

Հակասական կարգիքներ, տարբեր մոտեցումներ հոմանիշների շարք կազմող բառերի իմաստա-
յին նույնություն, նմանություն, մոտիկություն աստիճանը որոշելու վերաբերյալ:

Ոչ քիչ լեզվաբաններ նույնիսկ ժխտողական դիրք ունեն հոմանիշների բուն գոյության նկատմամբ։ Նրանք ընդունում են միայն բառերի նշանակությունների նույնությունը, բայց ո՛չ մոտիկությունը, պատճառարանելով, թե որպես հոմանիշներ բնդունված շարքում ամեն մի բառ ունի իր ոճային, գործածության ոլորտը, հուզա-արտահայտչական երանդը և այլն։ Այս մոտեցումը բավականին նեղացնում և աղքատացնում է հոմանիշ ըմբռնումը, հանգեցնելով նույնանիշի րմբռնմանը, ինչպես՝ այտ-թուշ, սպիտակ-ճերմակ, շրթունք-պոռոշ, կուսակցություն-պարտիա և այլն։

Հոմանիշների շարքը կազմելիս դժվար հարց է տվյալ շարքի մեջ մտնող բառերի նշանակության երանգների իմաստային մոտիկության բացահայտումը: Ցավոք, լեզվաբանության մեջ չկա այդ բանի համար անհրաժեշտ չափանիշ, ուստի և մեծ դեր է խաղում ուսումնասիրողի, տվյալ դեպքում՝ բառարան կազմողի անհատական մոտեցումը:

Հոմանիշների բառարանները տարբեր են լինում՝ նայած, թե ի՞նչ նպատակ է հետապնդում՝ կազմողը։ Դրանք կարող են տալ սոսկ հոմանիշային կապերի մեջ գտնվող բառերի բազմակողմանի նկարագրություններ, այնուհետև, կարող են ամփոփել սահմանափակ նյութ և ծառայել ուսուցողական նպատակների, աջակցել սովորողների բառապաշարի ընդլայնմանն ու ճշտմանը, ներգործել նրանց խոսքի զարգացման վրա։ Հոմանիշների բառարանը կարող է լինել նաև գործնական տեղեկատու՝ նախատեսված լայն շրջանների համար, այնպիսի մարդկանց, որոնք թեև լավ գիտեն տվյալ լեզուն, բայց իրենց աշխատանքի, ուսումնառության ընթացքում հանդիպում են դժվարությունների և կարիք ունեն մի ձեռնարկի, որն իր մեջ ամփոփած լինի տվյալ լեզվի իմաստային այս կամ այն խմբի մեջ մտնող բառային միավորները։ Գործնականում, տարբեր երկրների բառարանագրական աշխատանքում, մեծ տարածում է գտել հոմանիշների բառարանի վերջին տեսակը։

Գրախոսվող ԲՆՈՒՐԱՆԻ հեղինակի նպատակն է եղել ճառանձնացնել հոմանիշային կապերով խրար հետ առնչվող բառերն ու բառախմբերը, այսինքն՝ խմբավորել դրանք իմաստային նույնության կամ մոտություն սկզբունքով, տարբերակել ըստ տարբեր իմաստների և իմաստային նրբերանգների, տալ հոմանիշների արտահայտած հուզա-արտահայտչական բնութագրումը, նշել նրանց ոճական կիրառությունները և պատկանելիությունը լեզվի տարբեր շերտերին»²։

Ա. Սուքիասյանի բառարանը հայոց լեզվի հոմանիշների ամենաընդարձակ ու ամենալիակատար բառարանն է և՛ բառացանկով ու հոմանիշների շարքերով, և՛ դրանց վերաբերող քերականական ու ոճական նշումներով, և՛ բառերի մասնակի բացատրություններով: Բառացանկի մեջ արտացոլված է ռուսաց լեզվի բոլոր շերտերի բառապաշարը և գրական լեզվի ու բարբառների բառային արժեք ունեցող դարձվածաբանությունը»³:

Ունենալով ընդգրկման այսպիսի ընդարձակ շրջանակ, բառարանի հեղինակը պետք է հայոց լեզվի բազմահարուստ բառային ֆոնդից ընտրեր և կազմեր հոմանիշային շարքեր: Սակայն ի՞նչ սկզբունքով, երբ այս հարցը ժամանակակից հայ լեզվաբանության մեջ ուսումնասիրության հատուկ նյութ չի եղել և սպասում է իր լուսարանմանը: Ոմանք նույնանիշ բառերը համարում են հոմանիշների մի տեսակը, ոմանք էլ, մանկավարժական նկատառումներով, նույնանիշները տարբերում են հոմանիշներից՝ նկատի ունենալով նրանց առարկայական և իմաստային առանձնահատկությունները, անտեսելով նրանց ռճական տարբերությունները:

Ելնելով Հոմանիշների բնութագրման թե՛ ավանդական և թե՛ ժամանակակից տեսություններից, Ա. Սուքիասյանը Հոմանիշներ է համարում «միևնույն հասկացությունն արտահայտող այն բառերը, որոնք նույնն են կամ մոտ են իրենց իմաստներով, բայց կարող են տարբերվել իրարից կամ իմաստային նրբերանգներով, կամ ոճական առանձնահատկություններով, կամ էլ և՛ իմաստային նրբերանգներով, և՛ ոճական առանձնահատկություններով միաժամանակ»⁴։

Այս սկզբունքով կազմելով հոմանիշների խմբերը կամ շարքերը, հեղինակը բառարանի բառացանկը հասցրել է 83 հազար միավորի, մինչդեռ Գալայանի բառարանն ուներ ընդամենը 15 հազար բառ-հոդված: Ավելորդ է նշել նաև, որ 1968 թ. հրատարակված ուսաց լեզվի հոմանիշների վերջին բառարանը՝ ընդգրկում է միայն 9 հազար հոմանիշների շարքեր (առավելագույնը՝

2 ՏԵ՛ս Ա. Ս ռ է թ ա ս յ ա ն, Հայոց լեզվի հոմանիշների բառարան, 1967, Երևան, էջ 5:

3 Նույն տեղում, էջ 7:

4 նույն տեղում, էջ 6,

5 З. Б. Александрова, Словарь синонимов русского языка. Москва, 1968.

35—40 հազար հոմանիշներ)։ Վերջինիս կազմողը, գրախոսվող աշխատության հեղինակի նման հոմանիշների ընտրության, շարքեր կազմելու գործում հետևել է ավանդական սկզբունքներին։

Ա. Սուքիասյանի բառարանն ունի նաև ուրիշ ակնհայտ առավելություններ հոմանիշների նախորդ բառարանի համեմատությամբ։ Նախ՝ այն թարմություն է բերում իր բառացանկով, որ ճոխացված է Ստ. Մալխասյանցի քառահատոր «Հայերէն բացատրական բառարանից» դուրս մնացած մոտ 30 հազար նորաբանություններով։

Բառացանկում և բառաշարքերում տեղ են գտել նաև 19—20-րդ դարերի հայ գեղարվեստական դրականության մեջ լայնորեն գործածված հնարանությունները (գրաբար և միջին հայերեն բառեր), հայերեն բարբառների բնիկ հայերեն բառերն ու ոճերը, այն փոխառյալ բառերը, որոնք մտել են հայ գեղարվեստական գրականության մեջ և գործածական են խոսակցական լեզվի մեջ։ Հասարակական-քաղաքական և գիտատեխնիկական տարածված տերմիններից և բարբառային ծագում ունեցող բառերից տրված են միայն այնպիսիք, որոնցից միայն մեկը կամ երկուսն են որպես տերմին գործածվում, իսկ մնացածները մնում են որպես ընդհանուր լեզվի հոմանիշ բառեր⁶։

Հոմանիշների լրիվ շարքեր են կազմում բնականաբար, արդի հայոց լեզվի բառերը, իսկ գրական հոմանիշներ չունեցող բուսաբանության և կենդանաբանության բնագավառի, ինչպես նաև բարբառային (գավառական) բառերը, համապատասխան տեղում նույնպես կազմում են հոմանիշների առանձին շարքեր։ Այդպիսի շարքեր չեն կազմում միայն հնացած, հազվագեղ գործածական, գրաբար ու բարբառային բառերը, դարձվածաբանական բոլոր միավորները։ Վերջիններս հղվում են հոմանիշների լրիվ շարքեր կազմող հիմնական բառահոգվածներին։

Կազմողը մեքենայորեն չի հավաքել ու իրար կողքի շարել բառարաններում եղած հայերեն հոմանիշները, այլ նյութը անց է կացրել իր անատական ստեղծագործական բովով, բեռնաթափել ու գտել շարքերը (հատկապես, օտարազգի փոխառյալ բառերից)՝ հաշվի առնելով հայերենում նրանց տարածման աստիճանը և հեռանկարները։

Ա. Սուքիասյանի բառարանի կարևոր արժանիքներից է հայերենի դարձվածաբանության առատ և խելացի օգտագործումը։ Բառարանի բառացանկի բաղկացուցիչ մասն են կազմում բազմաթիվ հարադրություններ, դարձվածային արտահայտություններ, որոնք ունեն իրենց համապատասխան բառ-հոմանիշները։ Հեղինակը դրանք բարեխղճությամբ հավաքել և բառադիտական մշակման է ենթարկել, որի լավագույն ապացույց կարող են ծառայել Աչք, Գլուխ, Ձեռք, Ուրտ և այլ բառերով կազմված շարքերը։

Բառարանի մյուս մեծ առավելությունը զանազան քերականական և ոճաբանական նշումների առատությունն է։ Արդի հայերենի բառապաշարի ոճական բնութագրման ժամանակակից գիտական պահանջները բավարարող բացատրական բառարանի կամ տեսական որևէ աշխատության բացակայությունը ներկա հոմանիշների բառարան կազմողի համար, բնականաբար, առաջացրել է որոշ դժվարություն։ Իր իսկ խոստովանությամբ, պատկերացնելով «գործի ամբողջ ծանրությունն ու դժվարությունը», նա այնուամենայնիվ ձեռնամուխ է եղել սույն բառարանում հայերենի բառապաշարը որոշ նորմավորման ենթարկելու գործին և տվել բառերի ոճական բնութագրումներ։

Հեղինակի կատարած նորմավորման փորձերը ցույց տալու համար կատարենք մի քանի համեմատություններ Առձեռն (Հայկազյան) և Ստ. Մալխասյանցի բառարանների հետ։ Խելահեղությունները Ստ. Մալխասյանցի բառարանում նշված են որպես հազվագեղ գործածական, իսկ Ա. Սուքիասյանի մոտ տրված են իբրև արդի հայերենի գործածական բառեր, միայն, չգիտես ինչու, խելահեղություն ձևը դուրս է մնացել բառացանկից (բերված է խելահեղաբար բառին որպես հոմանիշ)։ Առձեռն բառարանից առնված Գոնություն, Մաւմնազիւծություն բառերը Մալխասյանցի բառարանում, իրավացիորեն, ունեն հնացած նշումը, իսկ Սուքիասյանը նկատի ունենալով այդ բառերի այժմյան գործածությունը, դրանք որպես բորոտություն և հաշմանդամություն բառերի հոմանիշներ տվել է հազվագեղ նշումով։ Բալխի բառը Առձեռնում չկա, Մալխասյանցի բառարանում բերված է հնացած նշումով, իսկ Սուքիասյանը ճիշտ կերպով տվել է որպես բարբառային բառ։ Եզմալ-ը Մալխասյանցի բառարանում տրված է որպես սովորական գործածական բառ, իսկ հոմանիշների բառարանում՝ բարբառային։ Գաւուկ բառը Մալխասյանցի բառարանում տրված է իբրև բարբառային, իսկ հոմանիշների բառարանում նրա ածանցված և բարդված ձևերը բերված են իրենց մարզական արդի իմաստներով։ Օրինակները շատ են։

⁶ Ա. Սուքիասյան, Հայոց լեզվի հոմանիշների բառարան, էջ 7։

⁷ Նույն տեղում, էջ 9։

Քերականական նշումների կողքին բառարանում բավականին հարուստ են բառի ոճական բնութագրման հուղա-արտահայտչական կողմին վերաբերող նշումները: Դրանց ընդհանուր թիվը անցնում է քառասունից:

Բացի այն նշումներից, որոնք ցույց են տալիս, թե բառը հայերենի բառապաշարի որ շերտին (գավառական, ժարգոնային, հնացած, հաղվաղեպ, արևմտահայ, բարբառային) կամ գիտության, տեխնիկայի, կենցաղի որ բնագավառին է պատկանում, կան նշումներ էլ, որոնք ցույց են տալիս բառ-հոմանիշների պատկանելիությունը խոսքի տարրեր ոճերին (խոսակցական, գրքային, բանաստեղծական և այլն):

Այս նշումներից դատ, հարկ եղած դեպքում, հիմնականում հնացած, հաղվաղեպ գործածական և գլխավորապես բարբառային բառերից կազմված հոմանիշների շարքերում տրվում են հակիրճ բացատրություններ, պարզաբանումներ, միայն մեկ անգամ՝ գերադասվող բառ-հոմանիշից հետո:

Ա. Սուքիսյանը բառարանի հոմանիշների շարքերը կազմել է հիմք ընդունելով բառերի իմաստների ճշգրտությունը, մոտությունն ու իմաստային նրբերանգային տարբերությունը կամ լրացուցիչ հուղա-արտահայտչական, ոճական և այլն դրանավորումը⁸:

Բառահոգվածում համապատասխան և անհրաժեշտ նշումներ ունեն ոչ միայն գլխաբառերը, այլև նրանց հոմանիշները, որոնք դասավորված են որոշ ընտրությամբ: Այսպես՝ նախ տրվում է բառի գրական ձևը իր քերականական և ոճական նշումներով, ապա լեզվի տարբեր ժանրերին վերաբերող դրական բառերը: Այնուհետև, տրվում են իրենց գործածական շրջանակներով սահմանափակված հոմանիշները համապատասխան նշումներով, այսինքն՝ հնացած, հաղվաղեպ, ժողովրդական լեզվի, խոսակցական, բարբառային (գավառական) բառերը: Հոմանիշների շարքի վերջում տրվում են դարձվածաբանական հոմանիշներ:

Հոմանիշների ընդգրկման չափերով և նորմավորման տեսակետից շունենալով իր նախորդը պարզ է, թե ինչպիսի դժվարությունների պետք է հանդիպեր հեղինակը իր մեծածավալ աշխատանքը ստեղծելու ընթացքում: Ուստի և հասկանալի է դառնում որոշ վրիպումների, անճշտությունների առկայությունը բառարանում: Այսպես՝ Ջրափակի գլխաբառն ունի ընդհանուր նշում (ածական), սակայն նրա 2, 3, 4 նշանակությունները և բերված հոմանիշները գոյական անուններ են: Զվարճամուլ բառը ունի գ. (գոյական) նշում, մինչդեռ, այն և բերված հոմանիշները ունեն նաև ածականի նշանակություն (տե՛ս նաև Աղիողորմ, Ինոթենակից, Գորովագին, Խաղաղատագին և այլն): Զրավել բառը ունի նշք. նշում, որ պետք է հասկանալ ներգործական և չեզոք սեռի բայ, սակայն 1-ին և 2-րդ նշանակությամբ տրված հոմանիշները միայն ներգործական սեռի բայեր են, իսկ երրորդ հոմանիշը՝ միայն չեզոք սեռի է: Կարծում ենք, ավելի ճիշտ կլիներ նման դեպքերում ամեն իմաստի համար առանձին տալ համապատասխան նշում: Լուական և Լուկաց գլխաբառերը միացված են (այսպես է նաև Ստ. Մալխասյանցի բառարանում) և տրված է հղում դեպի Լուկյաց բառը, այնինչ Առձեռն բառարանում Լուական և Լուկաց բառերը տարբեր են: Առաջինը բացատրված է լուռ կենալու, առանձնական (խուց)», Լուկաց բառը՝ լուռ կեցող, ճգնվոր», իսկ Առանձնական բառի վերջին 4-րդ իմաստն է՝ միանձնական: Վերջինին հոմանիշների բառարանում հղում է տրված դեպի Միայնակեցական և Կրոնավորական բառերը, որոնք չեն կարող Լուկյացի հետ հոմանիշ լինել:

Աշխատավորություն, Բանվորություն բառերը, առանց որևէ նշանի, վերապահության տրված են իրրև համազոր հոմանիշներ, նույնը և Քնություն 1. Աշխարհ» և այլն: Այս կարգի վրիպումները, հասկանալի է, անխուսափելի են նման ստվարածավալ աշխատանքի մեջ և չեն կարող որակական նշանակություն ունենալ կամ որևէ ստվեր գցել բառարանի վրա: Մենք ցանկանում ենք խոսել մի այլ հարցի մասին, որը, մեր կարծիքով, տվյալ բառարանի համար սկզբունքային նշանակություն ունի:

Ա. Սուքիսյանի աշխից չի վրիպել բառարաններում և իր օգտագործած գրականության մեջ եղած հոմանիշների գրեթե ոչ մի իմաստ, նույնիսկ շատ հեռավոր: Հոմանիշների շարքերը հասցված են առավելագույն չափերի՝ նախորդների համեմատությամբ, և այդ պետք է համարել բառարանագրի գնահատելի և շնորհակալության արժանի գործը: Բառարանը օգտվողին շոյալորեն տրամադրում է մեր ճկուն ու հարուստ լեզվի հոմանիշային գանձարանը: Սակայն, այս առավելությունից բխում է նաև որոշ դժվարություն, այդ այն է, որ շարքային ընթերցողներն հեշտությամբ չեն կարող կուլմնորոշել հեղինակի այնքան ջանադիր կերպով բերած բազմաթիվ նշումները: Օգտվողը հոմանիշների հարուստ շարքից պետք է սնվում ընտրի իր մտքին, տվյալ նյութին հա-

⁸ Նույն տեղում, էջ 9:

մապատասխանող բառը. քանի որ նույն շարքում են գտնվում նույնանիշ և հոմանիշ բառերը, որ երբեմն կարող է առիթ հանդիսանալ որոշ թյուրիմացությունների: Տվյալ դեպքում, դժվարին գործը արված է, ամենարնգարձակ ընդգրկմամբ նյութը հավաքված է, մնում է խիստ ընտրութիւամբ դատել ընդհանուր և կոնկրետ (տեսակային) իմաստ արտահայտող բառերը, մի շարքում տալ միայն այն հոմանիշ բառերը, որոնք նման պարագաներում կարող են միմյանց փոխարինել: Այս դեպքում շատ բառահոգվածներ կրեոնաթափվեն իմաստային մոտ առնչություն չունեցող որոշ բառերից, մի բառահոգվածի ընդհանուր շարքում տրված առարկայի և հատկանիշի հատկանիշը հանդիսացող բառերը կառանձնացվեն, կճշտվեն, կկոնկրետացվեն նրանց գործածության դեպքերը: Օրինակ՝ Գանդրահեր բառի 26 հոմանիշներից, միայն հինգը (գանդրամագ, փանդրավարս, գանդրագես, դանդրադիսակ, հերագանգուր) կիրառության տեսակետից կարող են միմյանց փոխարինել, որպես գլուխ, մարդ բառերի հատկանիշ ցույց տվող հոմանիշներ, իսկ մնացյալ 21-ը՝ գանգուր, դուռը, գալարուն, խուճուճ, ոլորուն և այլն) ցույց են տալիս ոչ թե գլխի, մարդու և այլն, այլ՝ մազերի հատկանիշ, ուստի կանչատվեն Գանդրահեր բառահոգվածի շարքից՝ կաղմելով իրենց առանձին շարքը: Նույն կերպ կարելի է վարվել նաև Աշխատավարձ, Գիշարժ, Գորովագութ, Ընձյուղել, Ընտանիք, Հովիվ, Ծանապարհ, Նետել, Տուն և այլ բառերի հոմանիշների շարքերի հետ:

Ցանկալի է մոտ ապագայում այս արժեքավոր բառարանի կողքին ընթերցողի սեղանին տեսնել նաև ավելի խիստ ընտրությամբ կազմված հոմանիշների առձեռն կամ դպրոցական մի նոր բառարան, որի անհրաժեշտությունը նույնպես մեծ է:

Անկախ դրանից, Ա. Սուքիասյանի «Հայոց լեզվի հոմանիշների բառարանի» գործնական նշանակությունը մեծանում է նաև արևմտահայերենի հարուստ բառապաշարի ընդգրկման շնորհիվ, որով այն հավասարաչափ օգտագործելի և օգտակար է դառնում նաև սփյուռքահայության համար:

Լ. ՊԵՏՐՈՍՅԱՆ